«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ի՞նչպես բարձրացնել դասի արդյունավետությունը աշխարհագրության դասավանդման ընթացքում:

Հետազոտող ուսուցիչ՝ Միկիչյան Էլմիրա
(Երևան քաղաք Հ.Գալստյանի անվ. թ.83 ավագ դպրոց)

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն **3**

Գրական ակնարկ Աշխարհագրության դասավանդման մեթդիկա **5**

Աշխարհագրության դասավանդման մեթոդները և դրանց դասակարգումը **5**

Աշխարհագրության ուսուցման մեթոդները ըստ գիտելիքի ստացման աղբյուրի **7**

Աշխարհագրության ուսուցման մեթոդները՝ ըստ դպրոցականների իմացական գործունեության բնույթի **11**

Հետազոտական աշխատանքի վերլուծություն **14**

Գրականության ցանկ **20**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հրապուրիչ, խորհրդավոր,հետաքրքիր գիտություն է աշխարհագրությունը:Դպրոցում դասավանդվող առարկաների մեջ գնալով մեծանում է նրա աշխարհայացքային և համամշակութային դերը:Այս առարկայի շնորհիվ է, որ արդի աշխարհագրությունը իր զարգացման օրինաչափություններով, օրեցօր բարդացող և նոր ծնվող հիմնախնդիրներով ճանաչելի է դառնում սովորողներին:

Աշխարհագրությունը ծանոթացնում է սովորողներին բնությանը, բնակչությանը ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների նյութական և մշակույթային արժեքներին:Օգնում է ճանաչելու մեր հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը մշտափոփոխ աշխարհում:

Ուստի անհրաժեշտ է սովորողի մեջ դաստիարակել կարողություն բնությունը հասկանալու այնպես, ինչպես այն կա իրականում, պարզ և միաժամանակ բարդ, իր ներդաշնակության մեջ վեհ:Դրա համար պետք է կարողանալ դիտել, վերլուծել և ընդհանրացնել ներկայի մեջ անցյալը տեսնելով միշտ առաջ գնալ:Մտքով և սրտով հասկանալ կենդանի և անկենդանի միասնականության օրենքները:

Հավերժ հայտնի և անհայտ բնության գաղտնարանի բանալիները գտնվում է նաև աշխարհագրություն գիտության և այն երախտավորների ձեռքում, ովքեր կոչված են սովորեցնելու, ուսանելու:

<<Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է>>: Ուիլյամ Ուորդ

Մանկավարժներիս կարևորագույն խնդիրն է հետաքրքրություն արթնացնել այս առարկայի նկատմամբ և հետաքրքրությունները դարձնել խթան սովորողների իմացական մակարդակը բարձրացնելու ճանապարհին:

Իմ աշխատանքային գործունեության ընթացքում ես սովորել եմ,սովորեցրել այն ճշմարտությունը, որ կայուն գիտելիք չունեցող, դասավանդման

բազմակողմանի մեթոդաբանությանը չտիրապետող մասնագետը չի կարող ուժեղ մարդ լինել, լիարժեք քաղաքացի դառնալ կամ դաստիարակել:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում կարևոր դեր ունեն ժամանակակից ուսուցման ձևերը, որոնք նպաստում են սովորողների մտավոր ունակությունների ակտիվացմանն ու զարգացմանը: Ուսուցման ավանդական

մեթոդներից ինտերակտիվ մեթոդների անցման անձնական փորձի վերլուծության հիման վրա աշխատանքում ներկայացվում եմ ուսուցման արդյունավետության բարձրացման նոր մոտեցումներն ու մեթոդները:Ներկայումս կարևոր է դարձել դասավանդման ավանդական մեթոդների ու եղանակների հետ համատեղ աշխարհագրության դասավանդման մեջ ներառել ուսուցման ժամանակակից փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդներ և եղանակներ՝ նպատակ ունենալով բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և զանազան հնարներ կիրառելու հնարավորություն ընձեռելով:

Արդի պայմաններում ժամանակակից սերունդ կրթելու համար մեթոդական այս նորարարությունները պարտադիր են: Այն նպաստում է սովորողի ինքնուրույն մտածելու, հմտություններ զարգացնելու, քննադատական մտածողության և ստեղծագործելու զարգացմանը:

Երեխաների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում մեթոդների ճիշտ ընտրությունը: Աշակերտն այսօր կարևորում է ուսուցչի կողմից իրեն գիտելիք հաղորդելու ձևը:

«Այս առումով էլ անհրաժեշտ է, որ աշխարհագրության ուսուցիչը յուրաքանչյուր դասին պատրաստվի հանգամանորեն, որովհետև սովորողների կողմից ծրագրային նյութի յուրացումը զգալի չափով պայմանավորված է այդ նյութը հաղորդողի որակից: Աշխարհագրության դասերի հաջողությունը մեծապես կախված է նրա կահավորումից, որի վրա ուսուցիչը պետք է աշխատի օրեր ու ամիսներ առաջ: Դրանք ոչ միայն քարտեզներ են, այլ նաև բազմաթիվ ու բազմաբնույթ ցուցադրական նյութեր»:

Սովորողների կարողությունների և հմտությունների ձևավորման համար կարևոր նշանակություն ունի դասավանդման ընթացքում համապատասխան մեթոդների ընտրությունը: Ուսման նկատմանբ հետաքրքրությունը մասամբ

կարելի է լրացնել նաև հետաքրքրաշարժ ուսումնական նյութի օգտագործմամբ, քանի որ դա նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը:

Ուստի իմ կողմից իրականցվող հետազոտության **նպատակն** է հետազոտել աշխարհագրական քարտեզների, դասագրքերի, դիդակտիկ նյութերի, էքսկուրսիաների նշանակությունը աշխարհագրական մտածողության ձևավորման գործում:

Նպատակին հասնելու համար առաջադրվել, լուծվել են հետևյալ **խնդիրները՝**

Ուսումնասիրել աշխարհագրական քարտեզների,ատլասների և դասագրքերի կիրառման նշանակությունը աշխարհագրության դասերին: Կազմակերպել էքսկուրսիոն այցելություններ մոնիթորինգի կենտրոններ և տարբեր արտադրական ձեռնարկություններ:

Վերլուծել աշխարհագրության տարբեր մեթդների կիրառումը դասապրոցեսում :

Կազմակերպել այդ մեթոդներով դասեր:

Բացահայտել մեթոդի հաջողված և թերի կողմերը:

Աշխարհագրության դասավանդման մեթոդները և դրանց դասակարգումը

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից եռակենտրոն համակարգի (գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորել սովորեցնելը, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայում ներառվում են.

- **Խոսքային մեթոդները** (պատմելը, զրույցը, բարձրաձայն ընթերցելը, դպրոցական դասախոսություն, շարադրությունը և այլն)
- **Ճանաչողական-ցուցադրական մեթոդներ** (նկարազարդումներ, ցուցադրումներ, դիտումներ,ուսումնական կինոֆիլմեր, հավաքածուների (կոլեկցիաների) և մոդելների օգտագործում,պաստառներ և այլն)
- **Գործնական** (փորձեր,գործնական աշխաըանքներ տեղանքում,վիճակագրական տվյալների վերլուծություն, տնային առաջադրանքների կատարում, ուրվագծային քարտեզների լրացում և այլն)
- **Տրամաբանական** (ինդուիկտիվ, դեդուկտիվ, անալոգիա և այլն)
- **Ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ**(վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, պրոբլեմային շարադրանք, հետազոտական և այլն)

- **Հետաքրքրությունների խթանման մեթոդներ**(ճանաչողական և ուսուցողական խաղեր այլն):
- **Ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ**(խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, երևույթի ուսումնասիրություն և այլն)
- **Համագործակցային ուսուցման մեթոդներ**(թիմային առաջադիմություն, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն և այլն)
- **Քննադատական մտածողության զարգացման մեթոդներ**(ԽԻԿ համակարգ, փոխներգործուն գրառումների համակարգ և այլն)
- **Խմբային աշխատանքի մեթոդներ**(մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնագնդի, ուսումնական մրցույթ և այլն):

Արդի ժամանակներում հիմնական մեթոդական նորարարությունները կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ այսինքն փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ որ մեկի կամ համակարգչի հետ: Ինտերակտիվ մեթոդներով դասերը վարելու հիմնական քայլերն են.

·Դասի նպատակների հստակ սահմանում:

·Սովորելու շահագրգռվածության ապահովվում:

·Տեղեկատվության մատուցում:

·Աշակերտների բաժանումը խմբերի կամ անհատական աշխատանք:

·Ուսուցչի աջակցությամբ աշակերտների աշխատանքի կազմակերպում:

·Աշխատանքների վերջնական արդյունքի ներկայացում:

Մեթոդների կամ մեթոդական հնարների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել, այսինքն՝ պետք է հասնել դասի նախապես ծրագրված նպատակին:Ի վերջո մեր՝ ուսուցիչներիս գլխավոր նպատակն է՝ զարգացնել աշակերտների սեփական քննադատական մտածողությունը,վերլուծական,նախաձեռնողական,համագործակցության, համեմատական, ընդհանրացնող մտավոր ունակությունները,ինքնուրույն հետևությունների հանգելու և բացատրություններ տալու հմտությունները:Վերջիններս հանդիսանում են ներկայիս ժամանակաշրջանի՝ սովորողից ակնկալվող հիմնական հմտությունները:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում գոյություն ունի և կիրառվում է ուսուցման մեթոդների երկու դասակարգում՝

1. ըստ գիտելիքի ստացման աղբյուրի

2. **ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի**, որը պայմանավորված է գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներով:

<u>Աշխարհագրության ուսուցման մեթոդները ըստ գիտելիքի ստացման աղբյուրի լինում է՝ խոսքային, դիտազննական և գործնական:</u>

1.1 Աշխարհագրության ուսուցման խոսքային մեթոդները:

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից՝ ըստ գիտելիքի ստացման աղբյուրի առավել կարևորվում է խոսքային մեթոդը: Առանց նրա հնարավոր չէ նաև ուսուցման գործընթացը: Խոսքային մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է խոսքի միջոցով: Գոյություն ունեն բանավոր և գրավոր (մտքի արտահայտումը գրավոր շարադրանքի եղանակով) խոսքային մեթոդներ: Բանավոր խոսքային մեթոդները տարբերվում են նյութի բովանդակության շարադրման ձևով: Այն կարող է կրել մենախոսության բնույթ՝ ուսուցչի պատմումը, բացատրությունը, դպրոցական դասախոսությունը, աշխարհագրական տեղեկատվական աղբյուրի հետ աշխատելու հնարներին ծանոթացումը: Կարող է կրել նաև երկխոսության բնույթ՝ զրույց աշակերտների հետ, աշխատանք դասագրքում զետեղված հարցերի և առաջադրանքների հետ: Ուսուցչի պատկերավոր և հուզական խոսքը մեծ ազդեցություն է թողնում սովորողի խոսքի տրամաբանության ձևավորման և զարգացման վրա:Հարկ եմ համարում ուշադրություն դարձնել ուսուցչի ձայնի տոնայնության վրա:Աշխարհագրության որոշ ուսուցիչներ խուսափում են պատմելուց՝ նախընտրելով զրույցը՝ իբրև առավել ակտիվ մեթոդ: Սակայն ուսուցչի մենախոսությունը ընկալվում է սովորողի կողմից իբրև մտքի կանոնավոր, տրամաբանական կուռ կառուցվածք ունեցող շարադրանքի նմուշ, ուստի ուսուցչի խոսքն անփոխարինելի դեր ունի ողջ կրթական գործընթացում: Խոսքային մեթոդների զարգացման գլխավոր հիմնական ուղղությունը դրանց ներուժի առավելագույն օգտագործումն է սովորողների մտավոր գործնեության կազմակերպման համար: Դրան հասնելու համար անհրաժեշտ է աշակերտներին սովորեցնել տրամաբանական գործողությունների եղանակներին՝ վերլուծություն, համադրում, համեմատում, համակարգում, ընդհանրացում: Խոսքային մեթոդներն անհրաժեշտ են որպեսզի աշակերտների մոտ ձևավորվեն հետևյալ կարողությունները՝ կատարել դատողություն, արտահայտել սեփական միտքը,

պատմել դիտարկված երևույթների մասին, կիսվել տպավորություններով և այլն: [1.էջ115-117]:

1.2 **Աշխարհագրության ուսուցման դիտազննական մեթոդները**

Այս խմբի մեթոդները տարբերվում են զննականության միջոցների կիրառմամբ:

Դիտազննական մեթոդներում գիտելիքների աղբյուրներն են հանդիսանում տարբեր ուսումնական պարագաներ: Դիտազննական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով: Դիտազննական մեթոդների շարքին են պատկանում ուսումնական նկարների, ցուցադրական աղյուսակների, էկրանային պարագաների, ուսուցողական կամ մանկավարժական նկարների, քարտեզների և մոդելների կիրառման մեթոդները: Դիտազննական մեթոդների հիմնական գործառույթը ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի պատկերավոր կերպարի ստեղծումն է գիտակցության մեջ, աշխարհագրական օբյեկտների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը (օրինակ՝ աէրոֆոտոնկարի միջոցով պատկերացում ենք կազմում ձնածածկույթի,սառցապատ տարածքների, ծովային հոսանքի վերաբերյալ): Ուսուցիչը ցուցադրում է դիտազննական պարագաները, կազմակերպում է դրա ընկալումը աշակերտի կողմից, ղեկավարում է վերջիններիս մտավոր գործունեությունը, սովորեցնում աշխարհագրական իմֆորմացիայի ստացման նմանատիպ աղբյուրների հետ աշխատելու եղանակները: Բազմատեսակ դիտազննական միջոցների ներդրումը ուսուցման գործընթաց նպաստում է ուսումնական նյութի առավել խոր ընկալմանը: Աշխարհագրության ուսուցման գործընթացում դիտազննական մեթոդները առավել կարևոր են, քանզի հիմնված են զգայական իմացության վրա, իսկ զգայական իմացությունը ժամանակային առումով նախորդում է ռացիոնալ իմացությանը մասին հասկացությունը: Տվյալ դեպքում դիտազննական մեթոդները հենք են հանդիսանում խոսքային մեթոդների համար: [1.էջ145]:

1.3 **Աշխարհագրության ուսուցման գործնական մեթոդները**:

Գործնական աշխատանքներ: Այս մեթոդներում գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը (բնական և հասարակական) ու նրա մոդելները (քարտեզներ, պրոֆիլներ,

գրաֆիկներ, մանրակերտեր և այլն): Գործնական մեթոդները ուսուցչի ու աշակերտի փոխկապակցված գործողություններ են, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները. ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, մոդելի կամ այլ օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը (օր.՝ ծանոթացնել քարտեզի «գունային լեզվին», որից հետո որոշել տարբեր վայրերի ռելիեֆի ձևերը՝ ըստ գունային ֆոնի): Ուսուցիչը առաջադրում է խնդիր, որի լուծման համար պետք է օգտվել քարտեզից, նկարից, մոդելից կամ այլ օբյեկտից՝ կիրառելով աշխատանքի՝ արդեն իսկ յուրացված եղանակները, ձեռք բերել նոր գիտելիք (օր.՝ քարտեզի «գունային լեզվի» և «գունային սանդղակի» օգնությամբ որոշել երկրի մակերևույթի տարբեր մասերի բացարձակ և հարաբերական բարձրությունները):Այս մեթոդի կիրառմամբ գործնական դասերի ժամանակ բավականին մեծ հետաքրքրություն է առաջանում աշակերտների մոտ:10-րդ դասարանում ՀՀ քաղաքների բացարձակ բարձրությունն են հաշվու օգտվելով ատլասների և քարտեզների լեգենդայից:Գործնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնեության համակարգված եղանակ է, որն իրականացվում է սովորողի ինքնուրույն ակտիվ գործողության միջոցով:

Այսպիսով՝ գործնական մեթոդների էությունն այն է, որ ուսուցչի օգնությամբ աշակերտները սովորեն ձեռք բերել նոր գիտելիք ուսուցման միջոցներից (քարտեզից, ֆիլմերից): Գործնական մեթոդները մեծ դեր են խաղում այնպիսի կարողությունների ձևավորման գործում, որոնք անհրաժեշտ են սովորողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար և կիրառելի են առօրյա կյանքում, օրինակ՝ թվային տվյալների վերլուծությունը, կառուցողական ունակությունները, ուսուցման տեխնիկական միջոցների հետ աշխատելու և դրանցից գիտելիք քաղելու կարողությունը և այլն:

Գործնական մեթոդների շարքին են պատկանում օբյեկտների ու երևույթների դիտարկումը բնության մեջ, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Այս մեթոդները նպաստում են աշխարհագրական գիտելիքների կիրառմանը հասարակական կյանքում և աշխատանքի տարբեր ոլորտներում (մթնոլորտային երևույթների կանխատեսում, հեղեղատների առաջացման կանխատեսում, ջրային ավազանների աղտոտման դեմ պայքարի ուղիների որոնում և այլն): Գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն գործնական աշխատանքները, որոնք կատարվում են

դասարանում, տեղանքում, արտադրկան և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Գործնական աշխատանքները աշակերտի ուսուցման կազմակերպման ձև է: Ուսուցողական գործնական աշխատանքները կատարվում են ուսուցչի ղեկավարությամբ: Ուսուցիչը բացատրում է գործողությունների հերթականությունը, ցույց է տալիս կատարման օրինակը և հանձնարարում առաջադրանքը, որը ենթադրում է գործողության վերարտադրումն ու մտապահումը, այսինքն ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը (օրինակ՝ «կետի աշխարհագրական կոորդինատների» որոշումը: Գտնել Երևանի,Տոկիոյի,Մոսկվայի աշխարհագրական լայնությունները,կամ շարժվել քո գտնված վայրից հյուսիս –արևելյան ուղղությամբ 5 քայլ): Վարժեցնող գործնական աշխատանքները ուղղված են կարողության ամրապնդմանն ու կատարելագործմանը, ինչը կհանգեցնի հմտության ձևավորմանը, այսինքն գործողության ավտոմատացմանը (օր.՝ ինքնուրույն ընտրել Եվրասիա մայրցամաքից երեք տեղանուն և որոշել դրանց աշխարհագրական կոորդինատները, որից հետո կրկնել նույն առաջադրանքը մյուս մայրցամաքների հետ): Այսինքն, ուսուցիչն առաջադրում է կետի աշխարհագրական կոորդինատների որոշմանն ուղված տարատեսակ աշխատանքներ, որոնք պահանջում են յուրացված կարողության բազմակի կրիկնություն և հանգեցնում հմտության ձևավորման: Ամփոփիչ գործնական աշխատանքները ուղղված են կարողությունների ու հմտությունների յուրացման որակի ստուգմանն ու դրանց կիրառմանը նոր պայմաններում (օր.՝ նավը գտնվում է հվ. լայն. 25° և արվ. երկ. 5° կետում և օգնություն է խնդրում, մոտակա երկու նավերը գտնվում են՝ 1-ինը հվ. լայն. 20° և արմ. երկ. 5°-ում, իսկ 2-րդը՝ հվ. լայն. 12 40° և արվ. երկ. 70°-ում, հարց. ո՞ր նավը ավելի շուտ կհասնի օգնության: Աշակերտի գործողությունը՝ գտնել նավերի տեղը քարտեզի օգնությամբ, չափել հեռավորությունը, արտահայտել կմ-ով կամ ծովային մղոնով և պատասխանել հարցին): Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին, որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների ու հմտությունների հիմքում: [2]:

2.Աշխարհագրության ուսուցման մեթոդները՝ ըստ դպրոցականների իմացական գործունեության բնույթի

Զարգացնող ուսուցման գաղափարներն իրականացնելու նպատակով 20-րդ դարի 70-ական թթ մշակվեց և ներդրվեց ուսուցման մեթոդների նոր դասակարգում, որը հաշվի է առնում աշակերտների իմացական գործունեության բնույթը տարբեր տարիքային խմբերում: Այդ գաղափարները այսօր լայն կիրառում են ստացել դպրոցում և հիմք են հանդիսացել ուսուցման գործընթացի կազմակերպման համար: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում, այս դասակարգման համաձայն, մեթոդները միավորվում են երկու մեծ խմբերում՝

· Բացատրացուցադրական մեթոդների խումբ՝ բացատրացուցադրական և ռեպրուդուկտիվ /վերհիշական/ մեթոդներ,

· Ստեղծագործական մեթոդների խումբ՝ պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական մեթոդներ: Բացադրացուցադրական մեթոդը կիրառվում է ուսուցչի կողմից ուսումնական իմֆորմացիայի փոխանցման ընթացքում: Ուսուցիչը բացատրում է, իսկ աշակերտը մտապահում և վերարտադրում է գիտելիքը այն տեսքով, ինչպես որ մատուցել է ուսուցիչը: Մեթոդի շրջանակներում ուսուցման առավել ընդունված մեթոդական հնարներն են՝ բացատրությունը, պատմելը (քարտեզի ցուցադրությամբ), բարձրաձայն ընթերցումը, դասագրքի նյութի վերապատմումը, աղյուսակային տվյալների որոնումը: Այս մեթոդի օգնությամբ ուսուցիչը ձևավորում է սովորողների գիտելիքների հիմնական պաշարը, որի հիմքի վրա հետագայում կազմակերպվում են ինքնուրույն աշխատանքները: Ուսուցիչը փոխանցում է գիտելիքը, սովորողները յուրացնում են տեղեկությունը՝ լսում են, կարդում են, դիտում են, մտապահում են, որից հետո պարզ վերարտադրում են ընկալվածը: Բացատրացուցադրական մեթոդը գիտելիքների փոխանցման ամենադյուրին մեթոդն է, իսկ ժամանակի իմաստով՝ առավել տնտեսողը, քանի որ կարճ ժամանակահատվածում հնարավոր է փոխանցել գիտելիքների մեծ ծավալ: Տնտեսական և սոցիալական աշխարհագրության շրջանակներում այս մեթոդը կիրառվում է ամբողջական թեմաների համալիր ներկայացման նպատակով, օրինակ՝ «Ֆրանսիայի տնտեսաաշխարհագրական բնութագիրը», «Ֆրանսիայի տնտեսական կապերը» և այլն: Ուսումնական տեղեկատվությունը կարելի է փոխանցել ոչ միայն բանավոր խոսքի, այլև տեխնիկական միջոցների օգնությամբ: Ժամանակակից դպրոցի ուսումնական աշխատանքներում առաջնայնությունը տրվում է բացատրությանը՝ փոքր-ինչ նվազեցնելով

պատմելու և նկարագրելու դերը: Բացատրացուցադրական մեթոդը կիրառվում է ոչ միայն տեսական գիտելիքի փոխանցման նպատակով, այլև նրա միջոցով ձևավորվում են աշխարհագրության ուսուցման մեջ կիրառվող բազմաթիվ հնարներ՝ քարտեզի ընթերցում, գծակարգի վերլուծում, աշխարհագրական նկարագրության և բնութագրի կազմում և այլն: Բացատրացուցադրական մեթոդը նպատակահարմար է լայնորեն կիրառել նաև ցածր դասարաններում: Վերհիշական կամ ռեպրոդուկտիվ մեթոդի նպատակը գիտելիքի կրկնության, ամրապնդման և վերահսկման իրականացումն է, իսկ քանի որ վերհիշել կամ վերծանել կարելի է միայն այն, ինչ լսել, տեսել, կարդացել ես, ապա այս մեթոդը կիրառվում է բացատրացուցադրական մեթոդի հենքի վրա: Վերհիշական մեթոդի գլխավոր հատկանիշը գործնեության եղանակի կրկնությունն ու վերարտադրությունն է ուսուցչի հանձնարարությամբ ըստ որոշակի պլանի կամ նմուշի: Վերհիշական մեթոդը ձևավորում և ամրապնդում է աշխարհագրական հատուկ կարողություններն ու հմտությունները: Ուսուցչի դերը, այս մեթոդի շրջանակներում այն է, որ, հանձնարարելով առաջադրանքը, կարողանա կազմակերպել աշակերտների կողմից գիտելիքի կիրառման և նյութի կրկնության բազմատեսակ եղանակները: Վերհիշելու մեթոդի էությունն է սովորեցնել աշակերտներին կիրառել ստացվող նոր գիտելիքներն արդեն ծանոթ ուսումնական իրավիճակում (աշխատանք տիպային պլանի հետ) կամ նոր գիտելիք ձեռք բերելու համար: Վերհիշական մեթոդներում մեծ տեղ է գրավում աշխատանքը քարտեզի հետ: Սովորողներին տրվում է գետերի, լճերի, լեռնաշխարհների, բնական զոնաների, առանձին պետությունների բնութագրերի պլանը:

Սովորողների առջև դրվում է խնդիր, որոնք նրանք պետք է լուծեն ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ, գտնեն լուծման եղանակները կամ արդեն ունեցած գիտելիքների կիրառման եղանակները նոր պայմաններում: Հակասությունները արդեն ունեցած գիտելիքների և նոր հանձնարարությունների միջև պետք է հանձնարարեն ինքնուրույն մտային և գործնական գործողություններով, որոնք կունենան ստեղծագործական բնույթ: Ստեղծվում պրոբլեմային իրավիճակ: Պրոբլեմային իրավիճակը սովորաբար ստեղծում է ուսուցիչը (բայց հնարավոր է, որ այն ստեղծի նաև սովորողը իր հարցադրումներով): Աշխարհագրության ուսուցման շրջանակներում առանձնացվում է պրոբլեմային իրավիճակի ստեղծման 3 տեսակ (ըստ Ա.Մ. Մատյուշկինի): Առաջին տեսակ՝ իրավիճակ, երբ խնդրի լուծման համար

գիտելիքներն անբավարար են, կամ խնդրի պայմանները բովանդակում են ոչ լիարժեք տեղեկություն: Երկրորդ տեսակ՝ երբ առկա գիտելիքներից ընտրվում են նրանք, որոնք անհրաժեշտ են խնդրի լուծման համար: Երրորդ տեսակ՝ երբ աշակերտները պետք է գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:

Պրոբլեմային շարադրանքի մեթոդ: Մեթոդի նպատակն է ցույց տալ աշակերտին իմացության բարդ ուղին, ճշմարտության պարզաբանման ճանապարհը որևէ բարդ հարցի ապացուցողական լուծման նմուշը:Բարձր դասարաններում ես հաճախ եմ օգտվում պրոբլեմային ուսուցման մեթոդից,երբեմն դիմելով նաև պարադոքսների. օրինակ՝ Ջադը որպես անհոսք լիճ բնության օրենքներով պետք է լինի աղի,բայց սա նմանօրինակ եզակի ջրային աքվատորիա է,որ քաղցրահամ է.ինչու՞:Կամ Բայկալի ներպա փոկի պարադոքսը,փոկերը՝ որպես կանոն ապրում են միայն ծովերում և օվկիանոսներում(աղի ջրերում), ի՞նչպես է այն հայտնվել այս քաղցրահամ և ամենախորը լճում:

Մասնակի-որոնողական մեթոդ: Այս մեթոդի նպատակն է աստիճանաբար մոտեցնել սովորողին ստեղծագործական աշխատանքին:

Հետազոտական մեթոդ: Այս մեթոդի կիրառման շրջանակներում աշակերտներն ինքնուրույն ուսումնասիրում են իրենց համար լիովին նոր նյութը ինքնուրույն:Այժմ կարևորվում է դպրոցներում աշակերտների կողմից հետազոտական աշխատանքների իրականացումը:Ինքս աշխարհագրության դասավանդման ընթացքում աշակերտների հետ քնիցս կատարել ենք:Ընտրելով համապատասխան թեման կազմակերտել և իրականացրել ենք հետազոտություն Երևանի օդի աղտոտման դեմ պայքարի թեմայով: Հետազոտական մեթոդն անփոխարինելի է պրոբլեմային ուսուցման պայմաններում, որը հաշվի է առնում աշակերտների անմիջական հետաքրքրություններն ու պահանջմունքները ուսումնական պրոբլեմը պետք է ելնի աշակերտի պահանջմունքները և համապատասխանի նրա պատրաստվածության մակարդակին: 9-րդ դասարանում ՀՀ գետերը,հողերը թեմաների ուսումնասիրության ժամանակ էքսկուրսիոն դաշտային և զննական ու քարտեզագրման մեթոդներով վերլուծում ենք շրջակա հողերի և Դեբեդի ջրի աղտոտվածությունն ու նրա հետևանքները:Օգտվելով նաև <<Բնագետ >> գիտահանրամատչելի ժողովածուից՝Դեբեդը և նրա հարակից հողերը աղտոտված են ծանր մետաղներով, որոնց թունավորող ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա ունի վնասակար պատկեր:

Պղինձ-առաջացնում է արյան կարմիր գնդիկների քայքայում,աճի կանգ,Վիլսոնի հիվանդություն,աչքի, ուղեղի,երիկամների,լյարդի աղտահարում,քաղցկեղ:

Ցինկ-սակավարյունություն,մաշկաբորբ,սրտի իշեմիկ հիվանդություն,քաղցկեղ:

Սնդիկ-կենտրոնական նյարդային համակարգի ախտահարում,մանկամտություն,սակավարյունություն և այլն:

Պատճառահետևանքային կապերի ինքնուրույն վերլուծելու արդյունքում կատարում են եզրահանգում՝ բնության մեջ, աշխարհագրական թաղանթում բոլոր ոլորտները կապված են և գտնվում են փոխազդեցության մեջ:Ուստի մարդու գործունեության հիմքում միշտ պետք է գործի հետևյալ սկզբունքը՝ Բնության դեմ չպետք է պայքարել,այլ բնության հետ պետք է համագործակցել ,ուստի պետք է գիտելիքներ ոչ միայն այս կամ այն առարկայից,այլ համակարգային,գիտական մոտեցում,իսկ աշխարհագրությունը տեղայնացնելու մեծ հնարավորություն ունի,որով էլ առաջնորդվում ենք՝ տեսնելու և հասկանալու բերկրանքը բնության ամենահիանալի պարգևն է:


Երկրակեղևի տիպերը





Հետազոտական աշխատանքի վերլուծություն

Չկա ավելի հանրամատչելի և հետաքրքիր գիտություն, քան աշխարհագրությունը,թեկուզ այն ինքնատիպ տեղով,որ այն զբաղեցնում է միջանկյալ դիրք բնական-ֆիզիկական աշխարհագրության առումով և հասարակական գիտությունների միջև:Սակայն ցանկացած դասընթաց գրավիչ դարձնողը ուսուցիչն է:Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները լիովին բավարարել դյուրին չէ:Դասաժամի 45-րոպեի ընթացքում պետք է կարողանալ դասի բովանդակությանը հաղորդել բարձր գիտակցություն,կիրառելով դասավանդման ժամանակակից և ավանդական մեթոդները,որոնք ներառում են կրթական ճանաչողական -զարգացնող և դաստիարակչական գործընթացներ:

Դասի արդյունավետությունը կանխորոշված է այքանով, որքանով ուսուցիչը նախապատրաստվել է դրան, որի ընթացքում ի հայտ են գալիս ուսուցչի ստեղծագործական կարողությունները, իսկ այդ կարողությունների սահմանը լոկ տվյալ առարկայով չի սահմանափակվում,այստղ է, որ կարևորվում է մանկավարժի բազմակողմանի զարգացումը, միջառարկայական կապերին տիրապետելը:

Մանկավարժական աշխատանքում վարպետ կդառնա նա, ով իր մեջ զգում է հետազոտոզին, հակառակ դեպքում ուսուցիչը վերածվում է միայն դասատուի:

Յուրաքանչյուր թեմայի ուսուցման առավել արդյունավետ տարբերակներ ընտրելու համար ուսուցիչը պետք է տիրապետի ուսուցման մեծ և բազմաբովանդակ զինանոցի:Ոսումնական և մտավոր գործունեության հնարներն ու միջոցները ճիշտ ընտրելու կարողությանը տիրապետելը աշխատանքի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման է:

Ուսմնական գործունեության կազմակերպման էությունը սովորողների ստեղծագործական ակտիվությունն ու ինքնուրույնության ապահովելն է, անհրաժեշտ է աշակերտին սովորել սովորեցնել, գիտելիքներ

ինքնուրույնաբար ձեռք բերել, հմտությունները մշակել և կարողությունները ձևավորել սովորեցնելը:

Պատմողական առարկա դասավանդող ուսուցիչներին հաճախ չի գոհացնում աշկերտների բանավոր խոսքը, ուստի բոլոր ուսուցիչների խնդիրներից մեկն էլ ուսուցիչների գրագետ բառապաշարն ու աշակերտի ճիշտ խոսքին հետևելն է, ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելը:Ծնողների աշխատանքը՝ երեխայի վատորակ հեռուստահաղորդումներից և փողոցային ժարգոնը յուրացնելուց և կիրառելուց զերծ պահելը:Մեր սեփական օրինակով՝ բարեկիրթ վարքագծով և գրագետ ու անթերի խոսքով, բազմակողմանի զարգացվածությամբ պետք է վարակենք մեր սաներին և հետո միայն արդյունք պահանջենք:Յուրաքանչյուր դասի հաղորդում պետք է լինի նպատակային՝ պահպանելով լեզվական ճշտությունը, պարզությունը և արտահայտչականությունը: Որքան էլ կարևորվեն կրթության որակի վրա ազդող գործոնները՝ սոցիալական վիճակ, սովորելու անհրաժեշտ պարագա և միջավայր, նախնական դաստիարակվածություն, իրագործելի կրթական պահանջներ, որակյալ ուսուցիչ-հասարակական պահանջ, սպասվող արդյունքներ, հասարակությանը պիտանի անձնավորություն դառնալու ազգային նպատակներ՝ վերջնարդյունքում: Այն պայմանավորված է ուսուցիչ-աշակերտ փոխգործառույթով կամ ինքնակրթության մեջ հետևողականությամբ:

Աշակերտը պետք է համոզված լինի, որ իր աշխատանքը անհրաժեշտ է ինչ-որ մեկի համար, որ կատարելով այն, հասնելով որոշակի արդյունքի դրանով իսկ քայլ են անում իրենց ընդհանուր զարգացման մեջ,ուստի աշակերտին որոշակի պահանջ ներկայացնելով՝ պետք է նաև նրան զինել համապատասխան դիրքորոշումներով:Խոսենք օրինակով. <<բնությունը վրեժ է լուծում>> այս մոտեցումն է ընկած 11-12-րդ դասարանների թեմայի 50% -ում: Աշակերտների հետ զրույցում նրանք պետք է յուրաքնչյուր թեմայից հետո արտահայտնեն իրենց դիրքորոշումը՝ այս կամ այն հիմնախնդրի ուսումնասիրությունից հետո:Պատճառահետևանքային կապերի վերլուծությունների արդյունքում աշակերտները հանգում են այն եզրակացության,որ մարդը պետք է առաջնորդվի և՝ բնական և՝ հասարակական օրենքով,հնարավորինս պահպանելով բնական հավասարակշռությունը,հակառակ դեպքում բնությունը վրեժ է լուծում

մարդկությանն ապտակելով՝ ջրհեղեղներով, սողանքներով,հրդեհներով,անբուժելի հիվանդություններով և այլն:

Իմ գործունեության գլխավոր նպատակն է՝ զարգացնել աշակերտների սեփական մտածողությունը,վերլուծական, համեմատական, ընդհանրացնող մտավոր ունակությունները,ինքնուրույն հետևությունների հանգելու և բացատրություններ տալու հմտությունները:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա 4, Երևան, 2002, «Զանգակ-97», 328 էջ:

2.Մինասյան Ա.,«Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011 թ.:

3.Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ.:

4.Բնագետ գիտահանրամատչելի և գիտամեթոդական հանդես 2017,2

5.Сушкова О.Ю. Методика обучения география. М., 2009 г..